ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2005 թվականի մայիսի 20-ին

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Գ Լ Ո Ւ Խ 2

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հոդված 4. Գյուղատնտեսական տեխնիկայի և տրակտորային կցանքների պետական հաշվառման պայմանները, գյուղատնտեսական տեխնիկայի պետական միասնական համարանիշների տրամադրումը

1. Հայաստանի Հանրապետությունում շահագործվող գործարանային արտադրության կամ ինքնաշեն գյուղատնտեսական տեխնիկան ենթակա է պարտադիր պետական հաշվառման (այսուհետ՝ հաշվառում):

2. Գյուղատնտեսական տեխնիկայի սեփականատերերը պարտավոր են տեխնիկան ձեռք բերելուց հետո Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ 15-օրյա ժամկետում, դիմել ~~գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչությանը~~ *լիազորված պետական մարմնին*՝ այն հաշվառման վերցնելու համար:

3. Հաշվառման ենթարկված գյուղատնտեսական յուրաքանչյուր տեխնիկայի համար սեփականատիրոջը տրվում է պետական համարանիշ և տեխնիկական վկայագիր, որի ձևը հաստատում է ~~գյուղատնտեսության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմինը (այսուհետ՝ լիազորված մարմին)~~ *լիազորված մարմինը*:

4. Առանց տեխնիկական վկայագրի և պետական համարանիշի գյուղատնտեսական տեխնիկայիշահագործումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Հոդված 5. Գյուղատնտեսական տեխնիկայի հաշվառումը և հաշվառումից հանելը

1. Գյուղատնտեսական տեխնիկան հաշվառելու համար սեփականատերը պարտավոր է ~~գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսուչին~~ *լիազորված մարմնի համապատասխան պաշտոնատար անձին* ներկայացնել՝

ա) դիմում.

բ) գյուղատնտեսական տեխնիկայի սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթ.

գ) ինքնաշեն գյուղատնտեսական տեխնիկայի հաշվառման դեպքում հիմնական հանգույցների (շարժիչի, ամրաշրջանակի) ձեռքբերման օրինականությունը հաստատող փաստաթղթեր.

դ) «բ» և «գ» կետերում նշված փաստաթղթերի բացակայության դեպքում սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթ է համարվում դատարանի վճիռը կամ օրենսդրությամբ սահմանված կարգով նոտարի կողմից վավերացված՝ սեփականատիրոջ հայտարարությունը.

ե) գյուղատնտեսական տեխնիկայի հաշվառման համար օրենքով նախատեսված տուրքերի վճարումների անդորրագրերը.

զ) ֆիզիկական անձը՝ անձը հաստատող փաստաթուղթ, իսկ իրավաբանական անձը՝ պետական գրանցման վկայագիր:

Տեխնիկական վկայագիրն ստորագրում և կնքում է ~~գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչությունը~~ *լիազորված պետական մարմինը*:

2. Գյուղատնտեսական տեխնիկան հաշվառվում է ~~գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության~~ *լիազորված պետական մարմնի* կողմից գյուղատնտեսական տեխնիկայի տեխնիկական վկայագրում, իսկ տեխնիկական վկայագիրը տրված չլինելու դեպքում՝ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կամ «գ» կամ «դ» կետերով նախատեսված փաստաթղթերում նշված տվյալների համապատասխանությունը փաստացի վիճակին ստուգելու համար զննում կատարելուց հետո:

3. Գյուղատնտեսական տեխնիկայի սեփականատիրոջը պատկանող հաշվառման վերցված գյուղատնտեսական տեխնիկայի տեխնիկական վկայագրի, պետական համարանիշի տվյալները գրառվում են գյուղատնտեսական տեխնիկայի հաշվառման գրքում: Հաշվառման գիրքը պահպանվում է 20 տարի՝ պետական կառավարման լիազորված մարմնում:

4. Գյուղատնտեսական տեխնիկան հաշվառումից հանվում է՝

ա) գյուղատնտեսական տեխնիկայի նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցման դեպքում.

բ) գյուղատնտեսական տեխնիկայի ոչնչացման դեպքում.

գ) գյուղատնտեսական տեխնիկայի խոտանման դեպքում:

Խոտան ճանաչելու չափանիշները սահմանում է լիազորված մարմինը:

5. Գյուղատնտեսական տեխնիկայի նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցման մասին տվյալները գրառվում են տեխնիկական վկայագրում, իսկ գյուղատնտեսական տեխնիկայի ոչնչացման և խոտանման դեպքում տեխնիկական վկայագիրը և պետական համարանիշը վերադարձվում է ~~գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչությանը~~ *լիազորված պետական մարմնինը* որի մասին համապատասխան գրառում է կատարվում գյուղատնտեսական տեխնիկայիհաշվառման գրքում:

Դիմումի ձևերը հաստատում է լիազորված մարմինը: